



## Հետազոտական աշխատանք

<p>Կազմակերպության տվյալներ</p> <ul style="list-style-type: none"> <li>• Անվանում, հասցե</li> <li>• Տնօրեն</li> <li>• Էլ. հասցե</li> <li>• Հեռախոս</li> </ul>	<p>«Մասնակցային դպրոց» կրթական հիմնադրամ Վահրամ Սողոմոնյան <a href="mailto:masnakcayindproc@gmail.com">masnakcayindproc@gmail.com</a> +37493581908</p>
<p>Հետազոտության թեմա/վերնագիր</p> <ul style="list-style-type: none"> <li>• Հետազոտության թեմա</li> </ul>	<p>Վաղելքով մարգախաղի տեխնիկական և տակտիկական հնարքների ուսուցումը ուժադրության զարգացման գրավական 6-րդ դասարանում</p>
<p>Ուսուցչի տվյալներ</p> <ul style="list-style-type: none"> <li>• Անուն, ազգանուն, հայրանուն</li> <li>• Մասնագիտություն</li> <li>• Հեռախոս</li> <li>• Էլ. հասցե</li> <li>• Դասավանդվող առարկաներ</li> <li>• Դասարաններ</li> </ul>	<p>Լիանա Գևորգյան Սամվելի  Ֆիզիկուլտուրայի ուսուցչուհի 098 06 50 99 <a href="mailto:l28703273@gmail.com">l28703273@gmail.com</a> Ֆիզիկուլտուրա  3, 4, 6, 7-րդ դասարաններ</p>
<p>Ուսումնական հաստատության տվյալներ</p> <ul style="list-style-type: none"> <li>• Անվանումը, հասցե</li> <li>• Հեռախոս</li> <li>• Էլ. հասցե (տնօրենության)</li> <li>• Web կայքի հասցե</li> </ul>	<p>ՀՀ Կոտայքի մ. Բյուրեղավանի հիմնական դպրոց ՊՈԱԿ Ֆ. Բյուրեղավան Ս. Վարդանյան 2 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն, 900108000275</p>

Բովանդակություն

Ներածություն-----		
-----	<b>3</b>	<b>3</b>
<b>1.Վոլեյբոլ մարզախաղի տեխնիկական եւ տակտիկական հնարքների ուսուցում---</b>	<b>5</b>	
<b>2.Վոլեյբոլ</b>	<b>խաղի</b>	<b>ընդհանուր</b>
բնութագիրը-----	<b>10</b>	<b>4</b>
Եզրակացություններ, առաջարկություններ-----		<b>155</b>
Օգտագործված ցանկ-----		<b>գրականության 16 6</b>
		<b>7</b>

## Ներածություն

Թեմայի արդիականությունը: Վոլեյբոլը մարզախաղ է գնդակով՝ 6-ական մարզիկից կազմված երկու թիմի միջև: Վոլեյբոլը սկզբնավորվել է 1890-ական թթ-ին՝ ԱՄՆ-ում: Հետագայում անցել է Ճապոնիա, Չինաստան, Ֆիլիպիններ: Եվրոպայում վոլեյբոլը նախապես տարածում է գտել Չեխոսլովակիայում(1907թ. ): 1947թվականին կազմավորվել է Վոլեյբոլի Միջազգային Ֆեդերացիա(ՎՄՖ), որը միավորում է 148 երկիր(1985թ. ): ՎՄՖ-ի պաշտոնական մրցաշարերն են՝ կանանց և տղամարդկանց աշխարհի(1949թ. ) և մայրցամաքների(Եվրոպայինը՝ 1948թ. ), աշխարհի գավաթի(1965թ. ), ակումբային թիմերի Եվրոպայի գավաթի(1961թ. ) մրցումները: Օլիմպիական խաղերում ընդգրկված է 1964թ-ից: Խաղն ընթանում է 18x9մ չափսի ուղղանկյուն հրապարակում: Վոլեյբոլի հրապարակը մեջտեղից կիսված է ցանցով: Ցանցի բարձրությունը տղամարդկանց համար կազմում է 2,43մ, կանանց համար՝ 2,24մ: Խաղն ընթանում է գնդածև գնդակով, որի շրջանագիծը 65-67սմ է, քաշը՝ 260—280գ. : Երկու թիմերից յուրաքանչյուրը կարող է կազմում ունենալ մինչև 14 խաղացող, դաշտում խաղի ժամանակ կարող են լինել 6 խաղացող: Խաղի նպատակն է գրոհող հարվածով խփել գնդակը գետնին, այսինքն խաղային մակերեսի թեմանու կեսի վրա, կամ նրան ստիպել սխալվել: Խաղն սկսվում է գնդակը մատուցմամբ խաղի մեջ գցելով համաձայն վիճակահանության: Գնդակը մատուցելով խաղի մեջ գցելուց հետո մատուցման իրավունքն անցնում է այն թիմին, որը միավոր է շահել: Հրապարակը խաղացողների բանակով պայմանականորեն բաժանվում է 6 գոտիների: Մի թիմից մյուսին մատուցման իրավունքի յուրաքանչյուր անցնելու հետ մեկ այլ թիմ՝ որպես խաղարկության միավոր, խաղացողները շարժվում են մյուս գոտի ժամացույցի սլաքի ուղղությամբ: Վոլեյբոլ մարզախաղի ուսուցման համար պետք է սկզբում սովորողներին տեսական տեղեկություններ հաղորդել վոլեյբոլ խաղի կանոնների, ծրագրային պահանջների, դասերի ընթացքում վնասվածքների կանխարգելման և հիգիենիկ կանոնների վերաբերյալ:

Հանրակրթական դպրոցում դասը ֆիզիկական դաստիարակության գործընթացի կազմակերպման հիմնական ձևն է: Դպրոցականների ֆիզիկական դաստիարակության գործընթացում մեծ նշանակություն ունի մարզախաղերի անցկացումը, մասնավորապես վոլեյբոլը: Վոլեյբոլի ընդգրկումը դաստիարակության ծրագրում պատահական չէ: Վոլեյբոլի հիմնական առավելությունը նրա պարզության մեջ է: Այս խաղի տարբերակիչ առանձնահատկություններն են խաղացողների տեղաշարժերը: Վոլեյբոլը որպես մարզածև նպաստում է պարապողների շարժողական հնարավորությունների բազմակողմանի մշակմանը:

Վոլեյբոլը 5-9-րդ դասարանների աշակերտների ֆիզիկական դաստիարակության կարևոր միջոցներից է: Խաղային վարժությունները և ընդհանրապես գնդակներով կատարվող վարժությունները շարժողական ընդունակությունները մշակելու լայն հնարավորություն են ստեղծում: Վոլեյբոլի միջոցով զարգանում են նաև հարակություն, հիշողություն, ցատկունակություն, դիմացկունություն, կոորդինացիա: Գործնական

աշխատանքի մեծ փորձը ապացուցում է , որ այն դպրոցները ,որտեղ անց են կացվում վոլեյբոլի դասեր, հաջողությամբ լուծվում են առողջարարական և դաստիարակչական խնդիրները:

### **1.Վոլեյբոլ մարզախաղի տեխնիկական եվ տակտիկական հնարքների ուսուցում**

Վոլեյբոլ մարզախաղի ուսուցման համար պետք է սկզբում սովորողներին տեսական տեղեկություններ հաղորդել վոլեյբոլ խաղի կանոնների, ծրագրային պահանջների, դասերի ընթացքում վնասվածքների կանխարգելման և հիգիենիկ կանոնների վերաբերյալ: Վոլեյբոլ մարզախաղի տեխնիկական և տակտիկական հնարքների ուսուցման ընթացքում կրթական հիմնական խնդիրներն են .

1.Տեղեկություններ հաղորդել վոլեյբոլի խաղի կանոնների, ծրագրային պահանջների, դասերի ընթացքում վնասվածքների կանխարգելման և հիգիենիկ կանոնների վերաբերյալ:

2.Ամրապնդել գնդակի փոխանցման, ընդունման, սկզբնահարվածի և հարձակողական հարվածի կատարման հմտությունները:

3.Սովորեցնել հարձակողական հարվածի անհատական(միայնակ) և խմբային(երկուսով) շրջափակման տեխնիկան:

4. Սովորեցնել անհատական և թիմային տակտիկան: Գործադրությունները պատասխանության և հարձակման ժամանակ .

5. Ամրապնդել արագաշարժության, ցատկունակության, հարպկության, դիպուկության ընդունակությունները, կոորդինացիան և տարածության մեջ կողմնորոշվելը:

6. Դաստիարակել համագործակցություն, կազմակերպվածություն, ինֆնատիքապետում, տոկունություն և հանդուրժողականություն:

7. Նպաստել մասնագիտական, կիրառական, ֆիզիկական պատրաստականությանը: Վոլեյբոլ խաղի ուսուցումը պետք է սկսել տեխնիկական հնարների ուսուցումից:

Դրանք են՝

1. Տեղաշարժվել վոլեյբոլիստի կեցվածքով՝ կից ֆայլերով, կողմով, դեմքով, մեջքով առաջ, կանգառներ, արագացումներ:

2. Գնդակի փոխանցում երկու ձեռքով վերևից, ներքևից:

3. Գնդակի ընդունում երկու ձեռքով ներքևից:

4. Ներքևից ուղիղ սկզբնահարված և սկզբնահարվածի ընդունում:

5. Ուղիղ հարձակողական հարված:

6. Ծանոթություն վոլեյբոլի տակտիկական գործադրություններին:

Կատարել վոլեյբոլիստի կեցվածքով տեղաշարժեր: Խաղացողի կեցվածքով տեղաշարժեր առաջ, հետ, աջ, ձախ: Ցատկեր ցանցի մոտ: Քայլք և վազք կանգառներով: Գնդակի փոխանցում երկու ձեռքով վերևից կատարելու ժամանակ ոտները պետք է լինեն գատված և ձնկներում ծալված՝ մի ոտքը մի փոքր առաջ դրված, իրանը ուղիղ, ձեռքերը դեպի առաջ-վեր՝ արմունկները ծալված: Ձեռքերի ավերը գնդակին շփվում են դեմքի հավասարության վրա, փոխանցումը կատարվում է մատների միջոցով, բայց ոչ ձեռքի ավերով: Այս վարժությունը սկզբում կատարում ենք տեղում, իսկ հետո նաև առաջ շարժվելուց հետո: Գնդակի փոխանցումը ներքևից կատարվում է երկու ձեռքերի ծալված, միմյանց մոտեցված դաստակներով (բռունցք դարձրած դիրքով): Այն օգտագործվում է, երբ խաղացողը չի կարողանում վերին փոխանցման համար հասնել գնդակին, երբ գնդակն իջնում է ցանցին մոտ կամ կաշտում է նրան և ընկնում, ինչպես նաև այն դեպքում, երբ թիմին մնում է գնդակին մեկ շփման իրավունք, իսկ գնդակին հասնող խաղացողը հետո է ցանցից:

Գնդակի փոխանցումների ուսուցումը կարելի է իրականացնել հետևյալ հաջորդականությամբ .

1. Գնդակի փոխանցում գլխով երևում,

2. Գնդակի փոխանցում գույգերով,

3. Գնդակի հանդիպակաց փոխանցում՝ ցանցին գուգահեռ կամ ցանցի վրայով,

4. Գնդակի ընդունում երկու ձեռքով ներքևից:

5. Գնդակը նետել վեր և փոխանցել ընկերոջը,

6. Գնդակը նետել առաջ և ցատկով փոխանցել վեր,

7. Փոխանցումներ գույգերով,

8. Փոխանցումներ եռյակներով,

9. Փոխանցումներ ֆայակներով,

10. Փոխանցումներ շրջանով, փոխանցումներ ցանցի մոտ:

Սկզբնահարվածից գնդակի ընդունում երկու ձեռքով ներքևից: Այս հնարը կատարվում է հետևյալ կերպ . գնդակն ընդունելու համար կատարվում է տեղաշարժ՝ ֆայլով, ցատկով կամ վազով: Ելման դրությամբ՝ ոտները ծալված ծնկային և սրունք-թաթային հոդերում, մարմինն աննշան թեփված առաջ, արմունկները ուղիղ են, դաստակները կազմում են «կողպեք» և դրված են շարժման ուղղությամբ: Գնդակին մոտենալիս ոտները միաժամանակ ուղղված են և ձեռքերն աննշան շարժվում են առաջ-վերև: Հարվածը գնդակին կատարվում է նախաբազուկով: Կրկնել և ամրապնդել ներքևից երկու ձեռքով գնդակի ընդունումը .

1. Ներքևից երկու ձեռքով կատարել գնդակի ընդունում՝ ցանցի վրայից եկած:

2. Կատարել ներքևից երկու ձեռքով՝ գնդակի ընդունում գույգերով, շարժման մեջ:

3. Կատարել ներքևից երկու ձեռքով՝ գնդակի ընդունում սկզբնահարվածից հետո:

4. Կատարել ներքևից երկու ձեռքով՝ գնդակի ընդունում հարձակողական հարվածից հետո:

Սկզբնահարվածներ կատարելիս կարևոր նշանակություն ունեն շարժումների համաձայնեցվածությունը՝ գնդակի վերնետումները, հետթափն ու հարվածը գնդակին: Ներքևից ուղիղ սկզբնահարվածը կատարվում է հետևյալ կերպ . Խաղացողը կանգնում է դեմքով դեպի ցանցը, մեկ ոտն առաջ, հետին ոտը ծալված ծնկան հոդում, մարմինը թեփված առաջ: Գնդակը գտնվում է ձախ ձեռքի ափի վրա՝ գոտկատեղի կամ մի վտր ցածր բարձրության վրա: Աջ ձեռքը տարվում է հետ թափի համար, իսկ ձախով գնդակը նետվում է վերև՝ գլխից ոչ բարձր: Հարվածը գնդակին կատարվում է ձեռքի բաց ափով, կիսաբռունցքով, բռունցքով, ձեռքն ուղղելով գոտկատեղին հավասար: Վերին ուղիղ սկզբնահարված կատարելիս գնդակը վերնետել, ձեռքի հետթափով հարվածել գնդակին՝ ուղղած ձեռքի ափով: Սկզբնահարվածներն ուսուցանելիս նախ հանձնարարվում է գնդակը զցել խաղադաշտի սահմաններում, այնուհետև ըստ նշանակության՝ մրցակցի կիսադաշտի աջ կամ ձախ մասը: Ուղիղ հարձակողական հարված ուսուցանելու ժամանակ կարևոր է, որ թափավազի ժամանակ վերջին ֆայլում ոտը դրվի կրկնի մասով, որպեսզի կանխվի ցանցին դիպչելը կամ ոտը միջին գծի վրա դնելը: Թափավազի կարող է կատարվել երկու, երեք ֆայլով. այդ ժամանակ վերջին ֆայլն է՝ առաջ աջ ոտով, միացնելով ձախ ոտը և վերցատկ կատարել երկու ոտի հրումով: Գնդակին հարվածը կատարվում է վերցատկի (թռիչքի) բարձր կետում՝ ուղղված ձեռքով:

Հարձակողական հարվածները հիմնականում կատարվում են 4-րդ և 2-րդ գոտիներից, 3-րդ գոտուց կատարված փոխանցմամբ:

1. Կատարել ուղիղ հարձակողական հարված՝ հանդիպակաց փոխանցումից՝ ցանցի մոտ:

2. Կատարել ուղիղ հարձակողական հարված՝ ցանցի վրայից ցատկով:

3. Կատարել ուղիղ հարձակողական հարված՝ 3-րդ գոտուց:

4. Կատարել ուղիղ հարձակողական հարված՝ 2-րդ գոտուց: Հարձակողական տակտիկական գործողություններ:

Վոլեյբոլ խաղի տակտիկական գործողություններն լինում են՝ անհատական, խմբային և թիմային: Ցանկացած տակտիկական գործողություն կառուցվում է ելնելով խաղացողների տարրական տակտիկական գիտելիքներից, տեխնիկական հնարներին տիրապետելու ունակություններից և ֆիզիկական ընդունակությունների զարգացման աստիճանից: Խաղի ժամանակ խաղացողները դիտում են իրենց խաղընկերների և մրցակիցների շարժումները, գնդակի շարժման հետագիծը, խաղային իրադրությունների ընթացքը և ընդունում են որոշում՝ ինչպես գործել: Տակտիկական գործողությունների ուսուցման սկզբնական օրջանում այն պետք է կատարել աստիճանաբար՝ սկսելով տարրական դրություններից և շարժումներից: Անհատական գործողությունները պետք է սկսել խաղացողների՝ առանց գնդակի և գնդակով, տեղաշարժերից, երկրորդ փոխանցում, սկզբնահարվածի կատարում և հարձակողական հարվածի կատարումներից: Սկզբնահարված կատարելիս խաղացողը պետք է հայացքով գննի մրցակցի կիսադաշտը, նշանառի նպատակը, այնուհետև կատարի սկզբնահարվածը:

Ուսուցման նպատակով հանձնարարվում է կատարել .

1. Սկզբնահարված դեպի խաղադաշտի 3 մետրանոց միջանցքը,

2. Սկզբնահարված 1 և 5 գոտիները՝ խաղադաշտի անկյունները,

3. Սկզբնահարված այն վատ ընդունող խաղացողի վրա:

Գնդակը փոխանցող խաղացողը պետք է տիրապետի հեռումից վերև, փոխանցումներ առաջ և հետ կատարումներին: Բացի այդ, նա փոխանցումից առաջ պետք է գնահատի իր խաղընկերների գտնվելու վայրի դասավորությունը, նրանց հնարավորությունները և ընդունի որոշում՝ ում փոխանցել գնդակը: Հարձակվող խաղացողի տակտիկական պատրաստության հիմքը համակցված վարժություններն են, որոնց ընթացքում փոխանցող և հարձակվող խաղացողները ձգտում են հաղթահարել շրջափակողների և պաշտպանների դիմադրությունը: Ուսուցման նպատակով կարելի է հանձնարարել հարձակողական հարվածներ 4 և 2 գոտիներից, փոխանցումը 3 գոտուց. այնուհետև նույնը, միայն հարձակվողը գործում է ելնելով պաշտպանների գործողություններից և այլն:

## 2. Վուլեյբոլ խաղի ընդհանուր բնութագիրը

Խաղում են 6-ական մարզիկից կազմված 2 հակառակորդ թիմերով՝ փակ խաղասրահում կամ բացօթյա՝ 18 X 9 մ չափերով խաղադաշտում, որը 1 մ լայնության խաղացանցով բաժանված է 2 հավասար մասերի: Վուլեյբոլի գնդակը նման է ֆուտբոլի գնդակին, բայց ավելի թեթև է:

Խաղի նպատակն է՝ ավերի, ձեռքերի կամ մարմնի՝ գոտիատեղից վեր ցանկացած մասի հարվածով գնդակն անցկացնել ցանցի վրայով այնպես, որ այն ընկնի մրցակցի կիսադաշտը: Ընդ որում՝ թիմերից յուրաքանչյուրն իրավունք ունի գնդակին հարվածել ընդամենը 3 անգամ: Չի թույլատրվում որևէ գնդակը, ձեռքերում պահել և 2 անգամ անընդմեջ դիպչել նրան: Սովորաբար գնդակին երկրորդը հարվածող խաղացողն այն ուղարկում է ցանցից վեր՝ հնարավորին չափ բարձր, իսկ երրորդը կտրուկ հարվածով այն ուղարկում է ցանցի մյուս կողմը՝ «մարում է» գնդակը:

4 մրցախաղերում հաղթում է առաջինը 25 միավոր հավաքած թիմը՝ մյուսի նկատմամբ առնվազն 2 միավոր գերակշռության դեպքում: 5-րդ՝ որոշիչ մրցախաղում (թայ-բրեյկ), հաղթում է 15 միավոր վաստակած թիմը:

Մրցամարտում հաղթելու համար թիմին անհրաժեշտ է 5 մրցախաղից հաղթանակի հասնել 3-ում:

Վուլեյբոլն սկզբնավորվել է 1890-ական թվականներին ԱՄՆ-ում և արագորեն տարածվել է ամբողջ աշխարհում: Վուլեյբոլի միջազգային ֆեդերացիան ստեղծվել է 1947 թ-ին և միավորում է շուրջ 180 երկրներին: Օլիմպիական խաղերի ծրագրում այս խաղն ընդգրկվել է 1964 թ-ից:

Գոյություն ունի նաև համեմատաբար նոր՝ լողափի վոլեյբոլ մարզաձևը: Վուլեյբոլի այս տեսակը խաղում են աշխարհի բոլոր ավազածածկ լողափերին:

1996 թ-ից այն նույնպես ընդգրկված է Օլիմպիական խաղերի ծրագրում:

Նպատակը եւ հետազոտական հարցը	Ուսումնասիրության նպատակն է ուսումնասիրել և ներկայացնել վոլեյբոլ մարզախաղի տեխնիկական և տակտիկական հնարքների ուսուցումը:
------------------------------	--



	<p>Հարց: Արդյո՞ք վաղեմու խաղի տեխնիկական և տակտիկական հնարքների ուսուցումը նպաստում է ուժադրության զարգացմանը <b>6-րդ դասարանում:</b></p>
<p>Ո՞ր առանցքային կոմպետենցիային/կարողունակությանն է ուղղված նպատակի ուսումնասիրությունը</p>	<p>լեզվական գրագիտություն</p>
<p>Հետազոտության թիրախային խումբը և շրջանակը /<b>Ֆանակ, սեռային բաշխում/</b></p>	<p><b>6-րդ դասարան</b> <b>Տղա՝ 15</b> <b>Աղջիկ՝ 12</b></p>
<p>Օգտագործված հետազոտական մեթոդները, գործիքները (օրինակ՝ ֆանական հետազոտություն՝ հարցաթերթիկի միջոցով, որակական հետազոտություն՝ խորին հարցազրույցի միջոցով եւ այլն)</p>	<p>որակական հետազոտություն</p>
<p>Հետազոտության իրականացման ժամանակահատվածը</p>	<p><b>Սեպտեմբեր 2023 թ.</b></p>

**Հիմնական բովանդակություն**

<p>Փրակառության ակնարկ</p> <ul style="list-style-type: none"> <li>• Մեջբերումներ արդեն արված հետազոտություններից,</li> <li>• Մեջբերումներ գրականությունից, տեղեկության վստահելի աղբյուրներից:</li> </ul>	<p>Խաղացողը կատարում է սկզբնահարված, որը վերջինիս հետևանքով առաջին գոտուց տեղափոխվում է երկրորդ գոտի: սկզբնահարվածը կատարում են խաղային հրապարակի նակատային գոտուց, նպատակն է գնդակն իջեցնել մրցակցի</p>
--	--

<p><u>Պարտադիր է կատարել հղում աղբյուրին</u></p>	<p>խաղաղաշու կամ առավելագույնս դժվարեցնել մրցակցի պաշտպանողական գոտում գնդակի ընդունում: [1, 35-38]</p>
<p></p>	<p></p>
<p>Հետազոտության ընթացքը</p>	<p>Հետազոտական աշխատանք Դասարան - 6 - րդ Առարկա - Ֆիզիկուլտուրա Առակերտների թիվը - 27</p> <p>Թեմա՝ վոլեյբոլիստի կեցվածքը և տեղաշարժերը</p> <p>Նպատակը՝ հետաքրքրություն առաջացնել վոլեյբոլ մարզաձևի նկատմամբ; Ուսուցանել վոլեյբոլիստի կեցվածքի, տեղաշարժերի, գնդակի ընդունման, փոխանցման սկզբնահարվածի և ուղիղ հարձակողական հարվածի տեխնիկան Ուսուցանել ազատ և դիրքային հարձակման տակտիկական գործողությունները:</p> <p>Վերջնարդյունքները՝ Առակերտը կարողանա տիրապետել վոլեյբոլիստի կեցվածքի, տեղաշարժերի, գնդակի ընդունման, փոխանցման, սկզբնահարվածի և ուղիղ հարձակվողական հարվածի տեխնիկային: Ծանոթ լինի ազատ և դիրքային հարձակման տակտիկական գործողություններին:</p> <p>Դասի ընթացքը՝</p> <p><b>1</b>Խթանման փուլ - Տեսական տեղեկություններ հաղորդել վոլեյբոլ մարզախաղի կանոնների, տեխնիկական և տակտիկական հնարքների մասին: Բացատրել խաղի ընթացքում վնասվածքների կանխարգելման և հիգիենիկ կանոնները:</p> <p><b>2</b>Իմաստի ընկալման փուլ - Սովորեցնել անհատական և թիմային տակտիկան, գործողությունները պաշտպանության և հարձակման ժամանակ: Ամրապնդել գնդակի փոխանցման, ընդունման, սկզբնահարվածի և</p>

հարձակողական հարվածի կատարման հնարքունները; Ամրապնդել արագաշարժությունը, ցատկունակություն, դիպուկություն, հարպկության ընդունակություններ, կոորդինացիա և տարածության մեջ կողմնորոշվելը:

**3** Կռահատման փուլ – Կազմակերպել խաղ՝ 27 առակերտ և ուսուցիչ:

Դասարան 6-րդ

Առակերտների թիվը՝ 20

Թեմա՝ Վոլեյբոլիստի կեցվածքով տեղաշարժել կից ֆայլբոլ կողմով, դեմքով և մեջքով առաջ

Նպատակը՝ Վոլեյբոլ խաղի տեխնիկական հնարքների ուսուցում

Վերջնարդյունքները՝ Առակերտը կարողանա տիրապետել մարզախաղի տեխնիկական հնարքների տեղաշարժվել վոլեյբոլիստի կեցվածքով՝ կից ֆայլբոլով, դեմքով և մեջքով առաջ

Ընթացքը՝

**1** Խթանման փուլ – Բացատրել վոլեյբոլ մարզախաղի առանձնահատկությունները

**2** Իմաստի ընկալման փուլ – Ցուցադրել վոլեյբոլիստի կեցվածքով տեղաշարժերի տեխնիկական հնարքները: Առակերտներից յուրաքանչյուրին հնարավորություն տալ սեփական օրինակով ցուցադրել տեղաշարժերը:

**3** Կռահատման փուլ՝ Բացահայտել առակերտի թերացումներն ու շտկել:

Փորձարարական դասերի ընթացքում ձգտել են կիրառել համագործակցային մեթոդներ՝ հիմնվել ավանդական մեթոդների վրա: Ուշադրություն են դարձրել այն մեթոդների կիրառությանը, որոնք բխում են ուսուցման և դաստիարակության խնդիրներից, դասի

	<p>բովանդակությունից և առաջադրանքների անհատական առանձնահատկություններից: Դասապրոցեսը կազմակերպելիս առաջնային է եղել առաջադրանքների դերը, գույգերով կամ խմբերով կարողացել են առավել արդյունավետ դարձնել վաղեջյուլ մարզածևի տեխնիկական հնարների ուսուցումը, անհատական և թիմային տակտիկական, պատասխանողական և հարձակողական գործողությունները: Կազմակերպված խաղերի ժամանակ առաջադրանքները ուսուցողները են դարձրել նաև մարզախաղի կանոնների, տեխնիկական և տակտիկական հնարքների վրա, կարողացել են օգնել միմյանց, շտկել թերությունները: Նկատվել է մրցակցություն, աշխատել են արագաշարժության, հարակության, հիշատ կողմնորոշվելու ուղղությամբ:</p>

**Եզրակացություններ, առաջադրանքներ**


Հետազոտական աշխատանքի գլխավոր նպատակն էր վաղեջյուլ մարզածևի տեխնիկական և տակտիկական հնարքների ուսուցումը ժամանակակից մեթոդների միջոցով: Ուսուցման ընթացքում փորձեցի կիրառել համագործակցային մեթոդներ, ուսուցողները դարձրեցի ուսուցանման ընթացքում առաջադրանքների առաջնային դերին: Հետազոտությունն իրականացնելիս մեծ դժվարություններ էին առաջացնում դասարանում առաջադրանքների փոխադրված լինելը թիմային տակտիկական հնարքներ ուսուցանելիս: Այդ խնդիրները փորձում էի լուծել վաղեջյուլի խմբակի պարապմունքների ժամանակ: Իսկ գնդակի փոխանցման, ընդունման, հարձակողական հարվածի կատարման և մի շարք տեխնիկական հնարքների, վաղեջյուլիստի կեցվածքի, տեղաշարժերի ուսուցումը կատարում էինք փոխուսուցման մեթոդով:

<p>Վերհանված արդյունքներ, եզրակացություններ, պատասխան հետազոտական հարցին</p>	<p>Դասապրոցեսում նկատվում էր առաջադրանքների ոգևորությունը, հետաքրքրվածությունը մարզախաղով, տարբերակված ուսուցման արդյունքում տեսանելի էին առաջադրանքների օր օրի կատարելագործվող արագաշարժությունը, հարակությունը, կողմնորոշվելու</p>
--	--

	<p>հնտությունը: Կարծում են ճիշտ մեթոդների ընտրությունը, առակերտների անհատական առանձնահատկությունների ճիշտ գնահատումն ու դասապրոցեսում առակերտի դերի բարձրացումն առավել արդյունավետ են դարձնում առարկայի ուսուցումը:</p>
<p>Այլ տեղեկատվություն</p>	<p>Ժամանակակից վոլեյբոլում առավել տարածված է ուժեղ ցատկով մատուցումը: Դրա հակադրությունը համարվում է կարն (պլանավորված, մարտավարական) մատուցումը, երբ գնդակն ուղարկվում է ցանցին մոտիկ:</p>

Օգտագործված գրականության ցանկ

1. Զաֆարյան Ռ. « Վոլեյբոլը մեր խաղն է », Երևան 2007 թ.
2. Զաֆարյան Ռ., Ս.Նաչիկյան «Վոլեյբոլ» Երևան 2005 թ.
3. Էլեկտրոնային աղբյուրներ` [www.wikipedia.org](http://www.wikipedia.org)

<p>Հասվելության կցված նյութեր</p> <ul style="list-style-type: none"> <li>• Հետազոտության գործիքներ (Ուրբաթաբերրիկներ կամ այլ)</li> <li>• Նկարներ</li> <li>• Արդյունքներ</li> </ul>	<p>Վոլեյբոլ խաղացողների դիրքերը</p> 
--	--